



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

04.10.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/65**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Բողոք բերող՝ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Մեդպրո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Երրորդ անձ՝ «Մեդպրո» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Օհանյանի, Վ.
Վարդազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՏԴՊԱԿ-ԳՀԱՊԶԲ-19/61» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,
ռենտգեն ժապավենների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն)
կողմից 11.09.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019թ. կարիքների բավարարման համար ««ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնման ընթացակարգով ռենտգենյան ժապավենների ձեռքբերման 28/08/2019թ. ժամը 11:00-ին, Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 1 արձանագրության 9-րդ կետը,

2. Հանձնաժողովի 06.09.2019թ-ին հրապարակված թիվ 2 արձանագրության 2-րդ կետով 5-րդ չափաբաժնով «Մեդարո» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու, պայմանագիր կնքելու առաջարկի որոշումները փոփոխել և գնման առարկայի 5-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 11.09.2019թ.-ին:

12.09.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 18.09.2019թ.-ին նշանակվել է նիստ:

18.09.2019թ. -ին «Մեդարո» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Բողոքի քննությունն ավարտվել է 18.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.10.2019թ.-ին:

2. «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. Օգոստոսի 19-ի N 1 որոշմամբ հրապարակված հրավերին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն: 28.08.2019թ. ժամը 11:00-ին, ք. Աբովյան, Արզնու խճ. 10 հասցե 2-րդ հարկ նիստերի դահլիճում, տեղի ունեցած, Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 1 արձանագրության 6-րդ կետի համաձայն 5-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչել «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն:

Նույն որոշման 9-րդ կետով հանձնաժողովը հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը հանձնաժողովը որոշել է 5-րդ չափաբաժնի մասով 1-ին պեղը զբաղեցրած և ընտրված մասնակցից ճանաչել «Մեդպրո» ՍՊԸ-ին:

Գնման առարկայի 5-րդ չափաբաժնում ընդգրկված ռենտգեն ժապավենի մատակարարելու համար «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 2.840.000 դրամով, իսկ «Մեդպրո» ՍՊԸ-ն 2.874.000 դրամ ԱԱՀ ներառյալ և 2.395.000 դրամ առանց ԱԱՀ: Այնուհետև հանձնաժողովի 06.09.2019թ-ին հրապարակված թիվ 2 արձանագրության 2-րդ կետով 5-րդ չափաբաժնով հաղթող է ճանաչել «Մեդպրո» ՍՊԸ-ին և որոշում է կայացրել ռենտգեն ժապավեն մատակարարելու պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Գտնում ենք, որ հանձնաժողովի 28.08.2019թ. ժամը 11:00-ին, Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով 5-րդ չափաբաժնով «Մեդպրո» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու, պայմանագիր կնքելու որոշումներ անհիմն են և ենթակա է փոփոխման հետևյալ հիմնավորմամբ.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն հրավերը պետք է պարունակի՝ նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տրուքների, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրակերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշման հավելված N3 սահմանվել են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզատրոպիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ավելացված արժեքի հարկից ազատման արդյունությունների կիրառության շրջանակը, որի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են,

որոնք՝ դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին:

Ռենտգեն ժապավենները ընդգրկված են ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված N1 գնումների կազմակերպման կարգի 33-րդ կարգի 8 կետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պարտավորվում իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պարտավորվում չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պարտավորուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Տվյալ դեպքում «Մեդարո» ՍՊԸ-ն 5-րդ չափաբաժնի գնային առաջարկը ներկայացնելիս դրա մեջ ներառել է նաև ապրանքի ԱԱՀ-ն, մինչդեռ ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշմամբ վերոնշյալ ապրանքը ազատված է ԱԱՀ-ից, որը հայտը մերժելու հիմք է հանդիսանում, ուստի հանձնաժողովը պետք է մերժեր, քանի որ կեղծ տվյալ է ներկայացրել հայտում, որով էլ առավելություն է ձեռք բերել մյուս մասնակցի նկատմամբ:»:

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձին խնդրել են՝

1. Պարտավորեցնել «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019թ. կարիքների բավարարման համար «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնման

ընթացակարգով ռենտգենյան ժապավենների ձեռքբերման 28/08/2019թ. ժամը 11:00-ին, Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 1 արձանագրության 9-րդ կետը,

2. Հանձնաժողովի 06.09.2019թ-ին հրապարակված թիվ 2 արձանագրության 2-րդ կետով 5-րդ չափաբաժնով «Մեդպրո» ՍՊԸ -ին հաղթող ճանաչելու, պայմանագիր կնքելու առաջարկի որոշումները փոփոխել և գնման առարկայի 5-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ին:

3. «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 11.09.2019թ.-ին գրությամբ դիմել է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ հնարավորություն տալով «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 11.09.2019թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք, չի ներկայացել նաև նիստերին՝ ներկայացնելով գնման ընթացակարգի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. Երրորդ անձ՝ «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 5-րդ չափաբաժնի մասով ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Մեդպրո» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

«Մեդպրո» ՍՊԸ-ի ներկայացուցիչները ներկայանալով 18.09.2019թ.-ին հրավիրված նիստին, բանավոր կերպով հայտնել են, որ «Մեդպրո» ՍՊԸ-ն 5-րդ չափաբաժնի գնային առաջարկը ներկայացնելիս դրա մեջ ներառել է նաև ապրանքի ԱԱՀ-ն, քանի որ այդ ապրանքն ազատված չէ ԱԱՀ-ից: Իրենց կողմից ներկայացված 5-րդ չափաբաժնի մասով

ապրանքը՝ «ռենտգեն ժապավենը» ընդգրկված չէ ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո, այլ կրում է 3701 3000 00 համարի ծածկագիրը:

5. ԳԲԲԱ-ԼՕ-2019/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ռենտգեն ժապավենների ձեռքբերման նպատակով 21.08.2019թ.-ին հայտարարվել է «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով երկու ընկերություններ՝ «Մեդպրո» ՍՊԸ-ն և «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 28.08.2019թ. ժամը 11:00-ին, կայացրած նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մեդպրո» ՍՊԸ-ն, իսկ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, 5-րդ չափաբաժնի մասով զբաղեցնելով 2-րդ տեղը:

Հանձնաժողովի 06.09.2019թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ռենտգեն ժապավենների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկներն ու մասնակիցների կողմից ներկայացրած հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունն այն մասին, որ նշված ծածկագրով մրցույթի մասնակիցներ «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն և «Մեդպրո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, որոշել է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչել «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ին, իսկ 5-րդ չափաբաժնի մասով՝ «Մեդպրո» ՍՊԸ-ին, և որոշում է կայացվել ռենտգեն ժապավեն մատակարարելու պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Գնման առարկայի 5-րդ չափաբաժնում ընդգրկված «Ռենտգեն ժապավեն» ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ Ռենտգեն ժապավեն: Չափը՝ 35սմx43սմ: Թվային ապարատի համար նախատեսված չոր երևակայման համար, DT2B, պատճենահանման սարքը՝ AGFA DRYSTAR 5302 կամ համարժեք:

Գնման առարկայի հանդիսացող 5-րդ չափաբաժնում ընդգրկված «Ռենտգեն ժապավեն» ապրանքի համար «Մեդպրո» ՍՊԸ-ն ներկայացրել է 3.1 հավելվածը, որում որպես ապրանքի տեխնիկական բնութագիր նշված է՝ Ռենտգեն ժապավեն: Չափը՝ 35սմx43սմ: Թվային ապարատի համար նախատեսված չոր երևակայման համար, DT2B, պատճենահանման սարքը՝ AGFA DRYSTAR 5302:

Գնման առարկայի 5-րդ չափաբաժնում ընդգրկված «Ռենտգեն ժապավեն» ապրանք մատակարարելու համար «Մեդպրո» ՍՊԸ-ն ներկայացրել է 2.874.000 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ն ներառյալ և 2.395.000 ՀՀ դրամ գումար՝ առանց ԱԱՀ գնային առաջարկ:

Ռենտգեն ժապավենները ընդգրկված են ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո:

6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ԷսՁեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 11.09.2019թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի 3-րդ նախադասության համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

«ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 2-րդ հավելվածում սահմանվել է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշման 3-րդ հավելվածով սահմանվել են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը, որի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝ դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ռենտգեն ժապավենների ձեռքբերման նպատակով 21.08.2019թ.-ին հայտարարված «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով երկու ընկերություններ՝ «Մեդպրո» ՍՊԸ-ն և «ԷսՁեթ Ֆարմա» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 28.08.2019թ. ժամը 11:00-ին կայացրած նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մեդպրո» ՍՊԸ-ն, իսկ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ն՝ 2-րդ:

Հանձնաժողովի 06.09.2019թ-ին նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, իսկ 5-րդ չափաբաժնի մասով՝ «Մեդպրո» ՍՊԸ-ն, և որոշում է կայացվել ռենտգեն ժապավեն մատակարարելու պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերոնշյալ ընկերություններին:

Գնման առարկայի 5-րդ չափաբաժնում ընդգրկված «ռենտգեն ժապավեն» ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ Ռենտգեն ժապավեն: Չափը՝ 35սմx43սմ: Թվային ապարատի համար նախատեսված չոր երևակայման համար, DT2B, պատճենահանման սարքը՝ AGFA DRYSTAR 5302 կամ համարժեք:

Գնման առարկայի 5-րդ չափաբաժնում ընդգրկված «ռենտգեն ժապավեն» ապրանք մատակարարելու համար «Մեդպրո» ՍՊԸ-ն ներկայացրել է 2.874.000 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ն ներառյալ և 2.395.000 ՀՀ դրամ գումար՝ առանց ԱԱՀ:

Ռենտգեն ժապավենները ընդգրկված են ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊԶԲ-19/61» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ն ենթակա չէր նշման, քանի որ գնման առարկայի 5-րդ չափաբաժնում ընդգրկված «ռենտգեն ժապավեն» ապրանքը ընդգրկված է ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո՝ դրանով իսկ, ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշման հիմքով, ազատված է ԱԱՀ-ից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն երկու փաստաթղթի համար՝ գնային առաջարկը և հայտի ապահովումը: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարաման:

Անդրադառնալով գործով ներգրավված Երրորդ անձի ներկայացուցիչների այն պնդմանը, որ «Մեդպրո» ՍՊԸ-ն 5-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը ներկայացնելիս դրա մեջ ներառել է նաև ապրանքի ԱԱՀ-ն, քանի որ այդ ապրանքն ազատված չէ ԱԱՀ-ից, այն ընդգրկված չէ ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո, այլ կրում է 3701 3000 00 համարի ծածկագիրը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Հրավերով նախատեսվել է, որ մասնակիցն առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին. Հրավերով 5-րդ չափաբաժնի մասով սահմանվել է DT2B, իսկ մասնակցի կողմից ներկայացված 3.1-րդ հավելվածում նշված է՝ DT5B, ինչի պայմաններում

«Մեդպրո» ՍՊԸ-ին ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելը հանգեցնում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմանը:

Ինչ վերաբերում է Երրորդ անձի ներկայացուցիչների փաստարկներին, առ այն որ «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից 5-րդ չափաբաժնի մասով առաջարկված ապրանքը կրում է ոչ թե 3701 10 000 0, այլ 3701 3000 00 համարի ծածկագիրը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ նշված ծածկագրի ներքո ներառված «ռենտգեն ժապավեն» ապրանքը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 11.09.2019թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/65 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել ամբողջությամբ:

1. Պարտավորեցնել «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 28.08.2019թ.-ի թիվ 1 արձանագրությամբ կայացված «Մեդպրո» ՍՊԸ-ին 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու, 06.09.2019թ.-ի թիվ 2-րդ արձանագրությամբ «Մեդպրո» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել «ՏԴՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ 5-րդ չափաբաժնի մասով կայացնել «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ -ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ

ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

